| | |
|---|---|
| 1. | ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>NATURAL SCIENCES<br>ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ |

# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**ՀՏԴ 712.4(479.25)**
**DOI: 10.56246/18294480-2024.17-01**

**ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐՏԻՆ**
*գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,*
*ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկան*
էլփոստ՝ avagyanmartin@rambler.ru
**ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ**
*տեխնիկական գիտությունների թեկնածու,*
*ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի՝*
*Երևանի տարածքային բաժնի փորձագետ,*
*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հողային և ջրային ռեսուսների կառավարման ամբիոնի ասիստենտ*
էլփոստ՝ am.gevorg1983@mail.ru
**ԷՖԵՆԴՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ**
*տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*
*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հողային և ջրային ռեսուսների կառավարման ամբիոնի դասախոս*
էլփոստ՝ armgeoinform@mail.ru

***ՀՀ Արարատի մարզի Արբաթ համայնքի թիվ 1 մանկապարտեզի տարածքի և առկա խնդիրների ուսումնասիրությամբ որոշվել է իրականացնել կրթահամալիրի վերակառուցման և կանաչապատման նախագիծ: Այն նախատեսում է լանդշաֆտային ճարտարապետության տարրերի կիրառմամբ տարբեր ուսուցողական, ժամանցային հարթակների ստեղծում, որը կնպաստի ոչ միայն երեխաների ընդհանուր զարգացմանը, այլև հնարավորություն կտա նրանց ավելի երկար ժամանակ անցկացնել բացօթյա տարածքներում և զբաղվել տարբեր հետաքրքիր խաղերով, այդտեղ հատուկ ուշադրություն է դարձվելու նախադպրոցական հաստատության (այսուհետև՝ մանկապատեզ) զարգացմանը և լանդշաֆտային ճարտարապետության միջավայրի կազմակերպմանը: Քաղաքաշինական***

***զարգացման ծրագրերում անհրաժեշտ է կարևորել կրթական տարածքում բնապահպանության արժեքավոր տարբերությունների և լանշաֆտի պահպանումը, հողային պաշարների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը՝ միաժամանակ առաջնությունը տալով տարածքի վերատեղադրման ներուժի պահպանմանը:***

***Նախագիծ կազմելիս հաշվի են առնվել տարածքի ամբողջ լանդշաֆտի և դրա առանձին բաղադրիչների՝ հանգստի կազմակերպման նպատակով գնահատումը, բնակավայրի հատակագծով նախատեսված կանաչ տարածքների արդյունավետ տեղաբաշխումը և բնակչության մշակութակենցաղային սպասարկման պայմանները:***

***Նկարագրված մեթոդաբանությունը և կատարված աշխատանքի եզրակացությունները կարող են օգտագործվել Արարատի մարզի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական տարածքների նախագծային աշխատանքների մշակման համար:***

***Բանալի բառեր՝*** *նախադպրոցական ուսումնական հաստատություն, զարգացման միջավայր, կրթական երթուղի, լանդշաֆտային նախագծում, կանաչապատում:*

## Նախաբան

Նախադպրոցական կրթությունը տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստող, նախադպրոցական ծրագրային կրթություն է, որն իրականացվում է մինչև երեխայի վեց տարեկան հասակը: Ժամանակակից աշխարհում հատուկ ուշադրություն է դարձվում ինչպես երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացմանը, այնպես էլ կրթական տարածքների լանդշաֆտային միջավայրի ձևավորմանը: Ուշագրավ է, որ երեխաներն ավելի արագ են արձագանքում շրջակա միջավայրի փոփոխություններին, քան մեծահասակները, հետևաբար նրանց համար ավելի կարևոր են տարածական պայմանները (А. Д. Галимуллина, С. Г. Короткова, 2019**):**

Շրջակա միջավայրը երեխայի համար պետք է լինի զարգացման, դաստիարակության և կրթության կարևոր նախապայման: Ուստի անհրաժեշտ է կարևորել մանկապարտեզի բարեկարգ տարածքի դերը, նախադպրոցական տարիքի երեխաների համար ստեղծել ժամանցի նպաստավոր պայմաններ (Е. Ю. Егошина, Н. Е. Серебрякова, 2016):

Ներկայումս, հաշվի առնելով համաճարակաբանական հիվանդությունների տարածվածությունը, առավել քան երբևէ պետք է կարևորել երեխաների ուսումնական գործընթացի, խաղերի և բացօթյա զբոսանքների համատեղումը: Ուստի

մանկապարտեզի տարածքը պետք է դիտարկել որպես ընդհանուր կրթական միջավայրի կարևորագույն մաս և բարձրացնել դրա օգտագործման արդյունավետությունը:

Մանկապարտեզում կրթական հարմարավետ միջավայր ստեղծելու հիմնական խնդիրներից է երեխայի խոսքի, ճանաչողության, մտածելակերպի, հաղորդակցության զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումը: Շրջակա միջավայրը պետք է լինի բարեկարգված, խաղահրապարակով ապահովված:

Անհրաժեշտ է մանկապարտեզի տարածքը նախ խիտ գծային տնկարկներով անջատել հարակից թաղամասերից, ապա ծառաբույսերի գեղարվեստական կոմպոզիցիոն լուծումներով ձևավորել խաղահրապարակները, տաղավարները և նստարանների շրջակայքը (Ա. Ա. Գրիգորյան, 2010):

## Նյութը և մեթոդները

Ներկայումս գործող կրթահամալիրների ճնշող մեծամասնությունը նախագծվել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) տարիներին, երբ գործում էին այլ չափանիշներ, ուստի կրթության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել հիմնարար բարեփոխումներ՝ սկսած նախադպրոցական հաստատություններից: Կարևոր է ձևավորել նոր կրթական միջավայր՝ հիմնված ինչպես կրթության ժողովրդավարական սկզբունքների, այնպես էլ էկոլոգիական, «կանաչ» ճարտարապետական և լանդշաֆտային մոտեցումների վրա:



Նկ.1.ՀՀ Արարատի մարզի Արբաթ համայնքի քարտեզը:

Տեղին է նշել, որ ներկայումս հանրապետության կառավարության ծրագրով նախատեսվում են բազմաթիվ մանկապարտեզների և դպրոցների հիմնանորոգում և նորերի կառուցում, որտեղ ի թիվս այլ պայմանների անհրաժեշտ է հաշվի առնել լանդշաֆտային ձևավորումը:

Լանդշաֆտային ճարտարապետության և քաղաքաշինության նոր ուղղությամբ առավելագույնս հաշվի են առնվում մարդու էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական պահանջները, կարևորվում են մարդ-բնություն հարաբերությունների սերտացումը, քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքային միօրինակությունից

խուսափումը, կանաչապատման համար նախատեսված համապատասխան տարածքների օպտիմալ օգտագործումը, հատկապես երեխաներին տրանսպորտային բանուկ վայրերից հեռացնելը (Е. Ю. Егошина, Н. Е. Серебрякова, 2016, Т. Ю. Желонкина, Н. Е. Серебрякова, 2020):

Հաշվի առնելով վեր նշվածը՝ կարծում ենք, որ քաղաքաշինական զարգացման ծրագրերում անհրաժեշտ է կարևորել կրթական տարածքում բնապահ-պանության արժեքավոր տարբերությունների և լանդշաֆտի պահպանումը, հողային պաշարների՝ խնայողությամբ և արդյունավետ օգտագործումը՝ առաջնությունը տալով տարածքի վերատեղադրման ներուժի պահպանմանը:

ՀՀ Արարատի մարզի Արբաթ համայնքի թիվ 1 մանկապարտեզի տարածքի լանդշաֆտային ճարտարապետության կազմակերպման և վերլուծության համաձայն՝ կանաչապատման թերությունները վերացնելուց բացի անհրաժեշտ է ստեղծել տարածքի զարգացման ներառական այնպիսի միջավայր, որը հնարավորություն կտա երեխաներին ավելի երկար ժամանակ անցկացնել բացօթյա տարածքներում և ինքնուրույն (ինչպես անհատական, այնպես էլ խմբային) կամ ուսուցչի ղեկավարությամբ զբաղվել տարբեր հետաքրքիր խաղերով: Խնդիր է դրվել առանց պլանավորման էական փոփոխությունների լանդշաֆտային ճարտարապետության միջոցով ապահովել «Թիվ 1 մանկապարտեզ Արբաթ» նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքների ինտեգրումը շրջակա միջավայրին: Նախագիծ կազմելիս հաշվի են առնվել տարածքի ամբողջ լանդշաֆտի և դրա առանձին բաղադրիչների՝ հանգստի կազմակերպման նպատակով գնահատումը, բնակավայրի հատակագծով (նկ. 1) նախատեսված կանաչ տարածքների արդյունավետ տեղաբաշխումը և բնակչության մշակութակենցաղային սպասարկման պայմանները: Ընդ որում լանդշաֆտը գնահատելիս հաշվի է առնվել դրա ճանաչողական, գիտական, սպորտային, բնական և մշակութային նշանակությունը:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 04-Ն հրաման):

Որպես ինտեգրող կատեգորիա՝ Արբաթհամայնքի թիվ 1 մանկապարտեզի հատակագիծը կազմելիս և աշխատանքային նախագիծը մշակելիս հաշվի են առնվել մի շարք էկոլոգիական խնդիրներ՝

-տարածքի բնական ռեսուրսները և դրանց ռացիոնալ օգտագործումը,

-տարածքի քաղաքաշինական յուրացվածության աստիճանի որոշումը, ֆունկցիոնալ գոտիավորումը՝ գոտիների քաղաքաշինական տարբեր ռեժիմների հաստատումը:

**Արդյունքները և վերլուծությունը**

Կրթական տարածքների ձևավորումը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական և մտավոր բազմակողմանի զարգացմանը նպաստող արդյունա-

վետ եղանակ է: Այն իրականացվում է մանկապարտեզի տարածքում կրթահամալիրի նախագծի մշակման և կառուցման մեթոդով՝ լանդշաֆտային արժեքավոր տարածք ստեղծելու միջոցով (А. А. Агаурова, А. В. Бессонова,2020, Т. Ю. Желонкина, Н. Е. Серебрякова, 2020):

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից կրթական տարածքին բնորոշ է հարթ, փոքր թեքությամբ ռելիեֆայնությունը: Նման տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ գեոմորֆոլոգիական տարրերը՝ ալյուվիալ, պրոլյուվիալ, ակումուլյատիվ հարթավայր, մակերևույթի թեքությունը՝ $\leq 10^0$:

Կրթական տարածքի նախագծով նախատեսվում է բարելավել երեխաների առողջությունը, բարձրացնել նրանց ֆիզիկական ակտիվությունը և զարգացնել ճանաչողությունը:

Կրթական տարածքը մի շարք խաղային հարթակներ ներառող համակարգ է, որտեղ նախադպրոցական տարիքի երեխաները խաղերի օգնությամբ կարող են զարգացնել ֆիզիկական շարժունակությունը, տրամաբանությունը, ակտիվացնել շրջակա միջավայրի հետ շփումը և ձեռք բերել ինքնակազմակերպման հմտություններ: Այն՝ որպես գեղագիտական արժեք ներկայացնող ինքնուրույն արհեստական լանդշաֆտ, կարող է ծառայել նաև հանգստի համար:

Կրթական տարածքի վերակառուցման և կանաչապատման նախագծում ներառվել են նախկինում չօգտագործված կամ մասամբ օգտագործված տարածքներ, արահետներ, ընդհանուր ուղիները սահմանափակող տնկարկներ, որոնք նախատեսված են նաև համայնքի բնակիչների սահմանափակ այցելությունների համար (նկ. 2):

Նախագծում հաշվի են առնվել Հայաստանի և Արցախի համայնքների զարգացման ծրագրերը, ՀՀ ներդրումային քաղաքականությունը և ՀՀ ինովացիոն գործունեության իրականացման իրավական հիմքերը (Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենք):

Նկ. 2. Մանկապարտեզի կրթական տարածքի սխեման (կազմվել է հեղինակի կողմից):

Ըստ քաղաքաշինական զարգացման ծրագրերի՝ կարևորվել են կրթական տարածքում բնության արժեքավոր տարրերի և լանդշաֆտի պահպանումը, հողային պաշարների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ առաջնահերթություն է տրվել տարածքի վերարտադրման ներուժի պահպանմանը: Վերակառուցվող մանկապարտեզի նախագծումը կատարվել է առաջիկա 15 տարիների հաշվարկով:

Մանկապարտեզի տարածքի ոռոգման նպատակով կարելի է օգտագործել համայնքի ոռոգման աղբյուր ծառայող երեք խորքային հորերը, ինչպես նաև Հրազդան գետը:

Մանկական բոլոր հրապարակները հիմնական մուտքից սկսվող մոտավորապես 1մ լայնությամբ կածանով միանում են իրար (Ա. Ա. Գրիգորյան, 2010): Ձախից աջ տեղակայվում են հետևյալ կայանները.

1. *«Դեկորատիվ ծաղիկներ և խոտեր»* կայանը բաղկացած է հիմնական մուտքը և ուղիները զարդարող ծաղկե սիզամարգերից: Ընտրվում են այնպիսի ծառեր և թփեր, որոնք ծաղկում են գարնանից մինչև աշուն, չունեն փշեր, խոշոր ու հյութալի պտուղներ, չեն առաջացնում ալերգիա: Երեխաները կարող են ուսումնասիրել ծաղիկների գույները, տերևների կառուցվածքային տարբերությունները, նայել, թե ինչպես են միջատները նեկտար հավաքում: Առաջարկվում է կատարել նախադպրոցական տարիքի երեխաների ուշադրությունը գրավող տարբեր ծաղկային ձևավորումներ (Ա. Ա. Գրիգորյան, 2010):

2. *«Ասֆալտ խաղեր»* կայանը տեղակայված է շենքի շրջակայքում: Նախատեսվում է տեղադրել խաղեր, կառուցել տարբեր ոտնահետքերով, ցատկերի համար գծանշումներով, աստիճաններով առողջարարական ուղիներ, պատկերել տարբեր տառեր և թվեր:

3. *«Դեղագործական պարտեզ»* կայանը գտնվում է փակ մուտքի մոտ և նախատեսված է ուսուցողական և փորձարարական աշխատանքներ կատարելու համար: Մանկապարտեզի աշխատակիցները երեխաների հետ կարող են տնկել և մշակել բանջարաբոստանային մշակաբույսեր (գազար, դդմիկ, սմբուկ և այլն), խոտաբույսեր (սամիթ, թրթնջուկ և այլն):

4. *«Շոշափելի պարտեզ»* կայանը նախատեսված է բնական նյութերին ծանոթանալու, դրանք ուսումնասիրելու և դիդակտիկ խաղերի համար: Այն նախագծված է տարբեր մակարդակների և լցոնման տարաների բաց երկաստիճան դարավանդի տեսքով (նկ.2): «Թռչունների ճաշարան» կայանի հարևանությամբ գտնվելը (նկ.3) հնարավորություն է տալիս փայտե տախտակամածն օգտագործել որպես նստարան և թռչուններին դիտելու վայր:



ա) բ)

Նկ. 3. Ուսումնական և փորձարարական գոտում տեղակայված «Շոշափելի պարտեզ» կայան (կազմվել է հեղինակի կողմից).

*ա - լցոնման բեռնարկղի սխեման.* 1-ավազ, 2-մանրախիճ, 3-թեփ, 5-ծղոտ, 6-մամուռ, 7-պատիճ, 8-ապակե գնդիկ, 9-փայտե խորանարդիկներ, 10-փայտե շրջանակներ, 11, 12 - կոներ, 13 - պարաններ, 14 - կավ, 15 - մարմարե հատակներ, *բ - ընդհանուր տեսքը*:

5. *«Դեղագործական պարտեզ»* կայանը նախատեսված է անուշաբույր և բուժիչ բույսերին ծանոթանալու, դրանք ուսումնասիրելու համար(նկ. 4): Անհրաժեշտ է տեղադրել նախազգուշական ցուցանակներ, քանի որ որոշ երեխաներ կարող են ալերգիկ ռեակցիա ունենալ հոտերի կամ ծաղկափոշու նկատմամբ: Կայանը նախագծվել է կլոր ծաղկե սիզամարգի տեսքով, որի վրա բույսերի դասավորությունը նման է վեցթերթանի ծաղկի (А. А. Агаурова, А. В. Бессонова, 2020):




ա բ

Նկ. 4. Ուսումնական և փորձարարական գոտում տեղակայված «Դեղագործական պարտեզ» կայան (կազմվել է հեղինակի կողմից).

*ա - տնկման սխեման.* 1-անանուխ, 2-բուժիչ եղեսպակ, 3-ուրց սողացող, 4-սուրբ Հովհաննեսի զավակ, 5-խնկածաղիկ, 6-օձ լեռնագնաց, 7-վաղենակ դեղատու (*календула* лекарственная), 8- երիցուկ (ромашка), *բ - ընդհանուր տեսքը*:

6. *«Թռչունների ճաշարան»* կայանում տեղադրված են թռչունների կերակրման համար նախատեսված հարմարանքներ, որոնց միջոցով երեխաները կարող են կերակրել թռչուններին: Ի տարբերություն մյուս կայանների՝ այս կայանը կարող է օգտագործվել նաև ձմռանը:

7. *«Փշատերև բույսեր»* կայանը փոքր է, նախատեսված է փշատերև ծառերի մի քանի տեսակներ աճեցնելու համար (սոճի, գիհի, եղևնի): Ձմռանն այն կարող է օգտագործվել Ամանորի տոնը նշելու համար (Ա. Ա. Գրիգորյան, 2010):

8. *«Ակտիվ խաղեր»* կայանը բաղկացած է մանկական մարզական համալիրներից և հնարավորություն է տալիս կազմակերպել այլընտրանքային սպորտային խաղեր (Т. Ю. Желонкина, Н. Е. Серебрякова, 2020):

9. *«Դեկորատիվ թփեր»* կայանի բուֆերային, պաշտպանիչ և դեկորատիվ նշանակությամբ բույսերը հիմնականում կենտրոնացված են մարզումային, փորձարարական և խաղային տարածքներում (Т. Ю. Желонкина, Н. Е. Серебрякова, 2020, Գ. Ա. Գևորգյան, 2016):

10. *«Տրանսպորտային երթևեկության օրենքներ և կանոններ» կայանը* հետիոտնային անցումների և անցուղիների գծանշումներով տարածք է, որտեղ կարող են կազմակերպվել ուսուցողական խաղեր (Т. Ю. Желонкина, Н. Е. Серебрякова, 2020):

11. *«Մարզական խաղեր»* կայանը՝ որպես կրթական տարածքի կարևոր մաս, տեղակայված է առանձին գոտում:

Կարելի է ստեղծել նաև ուսուցողական քարտեզ. երթուղին կարող է ներառել բոլոր կայաններն ինչպես հաջորդականությամբ, այնպես էլ ընտրությամբ՝ հաշվի առնելով եղանակային պայմանները և երեխաների տարիքը (Պ. Ս. Էֆենդյան, 2012): Երթուղու տևողությունը 2-3 տարեկան երեխաների համար պետք է կազմի 30 րոպե, իսկ 5-7 տարեկան երեխաների համար՝ մինչև մեկուկես ժամ: Այն կարող է ունենալ թեմատիկ բովանդակություն, օրինակ՝ «Ի՞նչ է ծաղկում այսօր» թեմայի շրջանակում կկազմակերպվի այցելություն *«Դեղագործական պարտեզ», «Փշատերև բույսեր», «Դեկորատիվ թփեր», «Դեկորատիվ ծաղիկներ և խոտեր»* կայաններ: Երթուղին կարելի է կազմել նաև խաղի տեսքով՝ առաջադրանքների կատարմամբ:

Նախատեսվում է ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և զբոսանքի գոտիների կանաչապատում ու բարեկարգում՝ փոքր ճարտարապետական կառույցների, ջրային մակերեսների, շատրվանների, նստարանների, տաղավարների տեսքով և այլն (ՀՀ կառավարության 2003թ. № 625-Ն որոշում):

**Եզրակացություն**

Առաջարկվում է ՀՀ Արարատի մարզի Արբաթ համայնքի թիվ 1 մանկապարտեզի տարածքում իրականացնել կրթահամալիրի ստեղծման և կրթական միջավայրի արդիականացման նախագիծ, որը կնպաստի ոչ միայն երեխաների ընդհանուր զարգացմանը, այլև հնարավորություն կտա ավելի երկար ժամանակ անցկացնել բացօթյա տարածքներում և զբաղվել տարբեր հետաքրքիր խաղերով:

Նախագծի իրականացման արդյունքում մանկապարտեզը ձեռք կբերի ներառական և գործառութային զարգացման նշանակություն:

Նախադպրոցական հաստատությունների տարածքների վերակառուցումը, նոր կրթական միջավայրի ստեղծումը, լանդշաֆտային ճարտարապետության նորարարությունների ներդրումը հնարավորություն կտան խթանելու Հայաստանի առանձին վարչատարածքային միավորների, ինչպես նաև ներդրումային քաղաքականության զարգացումը:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Գրիգորյան Ա. Ա., Գեղազարդ պարտիզագործություն: Ուս. ձեռնարկ. - Եր.: ՀՊԱՀ, 2010. -276 էջ:
2. Գևորգյան Գ. Ա., Բազմանպատակ կադաստրային քարտեզների քարտեզագրագեոդեզիական հիմքի ստեղծումը // ՃՇՀԱՀ տեղեկագիր. - 2016. -N 2(51). - էջ 50-57:
3. Էֆենդյան Պ. Ս. և ուրիշ., Ստորերկրյա տարածքները որպես բնական ռեսուրս / Պ. Ս. Էֆենդյան, Ա. Դ. Գոմցյան, Ա. Ա. Առուստամյան, Գ. Ա. Գևորգյան // Տեղեկագիր Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի. -2011. -N 5.- էջ 97-101:
4. Էֆենդյան Պ. Ս., Գևորգյան Գ. Ա. Հողերի գոտիավորման մոդելների համեմատական վերլուծությունը //Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում. – 2012. -N 4. - էջ 78-85:
5. ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» № 625-Ն որոշում. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74171:
6. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023թ. Մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի № 263-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 04–Ն հրաման. https://www.arlis.am/documentview.aspx?docid=178406:
7. 2006թ. մայիսի 23-ի «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/documentview.aspx?Docid=24697:
8. Агаурова А. А., Бессонова А. В., Боярышник как живая изгородь в ландшафтном дизайне // Наука и образование: Мичуринский аграрный государственный университет, 2020, т. 3, N 1, с. 66.
9. Галимуллина А. Д., Короткова С. Г., Архитектурные средства формирования детских развивающих и образовательных пространств // Известия Казанского

государственного архитектурно-строительного университета, N 4, 2019, с. 79-88. https://doi.org/10.52409/20731523_2021_1_49.
10. Егошина Е. Ю., Серебрякова Н. Е., Планировочная структура и озеленение школьных территорий: проблемы, потребности и современные тенденции // Чтения памяти Т. Б. Дубяго. Сб. статей международной конференции / Под ред. И. А. Мельничук,СПб: Изд.Политехн. ун-та, 2016, с. 106-110.
11. Желонкина Т. Ю., Серебрякова Н. Е., Особенности ландшафтной организации территорий дошкольных образовательных учреждений: тенденции и современное состояние // Архитектура и архитектурная среда: вопросы исторического и современного развития. Материалы международной научно-практической конференции, Тюмень, 2020, с. 150-154. https://doi.org/10.36684/04.
12. Желонкина Т. Ю., Серебрякова Н. Е., Проект образовательного терренкура на территории детского сада N 50 "Солнышко" в городе Йошкар-ола // Наука и Образование. Мичуринский аграрный государственный университет, 2020, т. 3, N 4, с. 504.

## THE NEED FOR CHANGE OF CERTAIN PROVISIONS IN THE PROJECTS OF RECONSTRUCTION AND GREENING OF EDUCATIONAL COMPLEXES

**AVAGYAN MARTIN**
*Doctor of Agricultural Sciences,*
*Dean of the Faculty of Natural Sciences and Economics,*
*Gavar State University*
e-mail: avagyanmartin@rambler.ru
**GEVORGYAN GEVORG**
*PhD in Technical Sciences,*
*Expert of Yerevan Territorial Department,*
*Urban Development,Technical and Fire Safety Inspectorate, the Republic of Armenia*
*Assistant Professor at the Chair of Land and Water Resources Management,*
*National Agrarian University of Armenia*
e-mail: am.gevorg1983@mail.ru
**EFENDYAN PARUYR**
*Doctor of Technical Sciences, Full Professor,*
*Professor of Chair of Land and Water Resources Management,*
*National Agrarian University of Armenia*
e-mail: armgeoinfofm@mail.ru

After studying the No. 1 kindergarten territory of Arbat community in Ararat Marz of the Republic of Armenia and studying the existing problems, it was decided to implement the project of reconstruction and greening of the educational complex. It envisages the creation of various educational and entertainment platforms using the elements of landscape architecture, which will contribute not only to the general development of children, but also give them the opportunity to spend more time in outdoor spaces and engage in various interesting games, where special attention is paid to the preschool institution (hereinafter referred to as kindergarten) development and organization of landscape architecture environment.

In urban development programs, it is essential to prioritize the valuable differences in environmental protection and landscape preservation in the educational sector, as well as the careful and efficient use of land resources, while simultaneously giving priority to the preservation of the potential for area redevelopment.

When drafting the project, the evaluation of the entire landscape of the area and its individual components for recreational organization have been taken into account, including the effective distribution of green spaces as outlined in the settlement plan and the conditions for the cultural and social services for the population.

The described methodology and the conclusions of the performed work can be used for the development of design projects of educational areas of preschool educational institutions in Ararat Marz, as well as other communities of the Republic of Armenia and Artsakh.

***Keywords:*** *Preschool educational institution, developing environment, educational path, landscape design, greening.*

## О НЕОБХОДИМОСТИ ВНЕСЕНИЯ ИЗМЕНЕНИЙ В НЕКОТОРЫЕ ПОЛОЖЕНИЯ ПРОЕКТОВ РЕКОНСТРУКЦИИ И ОЗЕЛЕНЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ КОМПЛЕКСОВ

**АВАГЯН МАРТИН**
*Доктор сельскохозяйственных наук*
*Декан факультета естественных наук ГГУ*
электронная почта: avagyanmartin@rambler.ru
**ГЕВОРГЯН ГЕВОРГ**
*Кандидат технических наук*
*Орган инспекции градостроительства, технической и пожарной безопасности РА*
*Эксперт территориального управления Еревана*
*Ассистент кафедры управления земельными и водными ресурсами*

*Национального аграрного университета Армении*
электронная почта: am.gevorg1983@mail.ru
**ЭФЕНДЯН ПАРУЙР**
*Доктор технических наук*
*Национальный аграрный университет Армении*
электронная почта: armgeoinfofm@mail.ru

После изучения территории детского сада №1 Арбатской общины Араратского марза РА и изучения существующих проблем было принято решение реализовать проект реконструкции и озеленения образовательного комплекса. Он предусматривает создание различных образовательных и развлекательных площадок с использованием элементов ландшафтной архитектуры, которые будут способствовать не только общему развитию детей, но и дадут им возможность проводить больше времени на открытых пространствах и заниматься различными интересными играми, где особое внимание уделяется дошкольному учреждению (далее детский сад). разработка и организация ландшафтно-архитектурной среды.

В планах градостроительного развития необходимо уделить особое внимание сохранению природных условий окружающей среды и ландшафта в образовательных пространствах. Это включает в себя бережное и рациональное использование земельных ресурсов, с упором на сохранение потенциала территории для ее возможной переустановки в будущем.

При разработке проекта была проведена тщательная оценка всего ландшафта, а также его отдельных элементов. Это обеспечивает грамотную организацию зоны отдыха и эффективное размещение зеленых насаждений, предусмотренных планировкой населенного пункта, с учетом условий для культурно-бытового обслуживания местного населения.

Этот подход позволяет создать целостное пространство, отвечающее не только экологическим потребностям, но и потребностям сообщества.

Описанная методика и выводы выполненной работы могут быть использованы при разработке проектных работ образовательных территорий дошкольных образовательных учреждений Араратской области, а также общин Республики Армения и Арцаха.

***Ключевые слова:*** *дошкольное образовательное учреждение, развивающая среда, образовательный маршрут, ландшафтный дизайн, озеленение.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.06.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.06.2024թ.:
Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: